

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ.....	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն.....	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ.....	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.....	10
5.1. Բյուջեի եկամուտները.....	10
5.2. Բյուջեի ծախսերը.....	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը.....	13
5.4. Պետական պարտք.....	14
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ.....	15
6.1. Գնաճ.....	15
6.2. Ավանդներ	16
6.3. Վարկեր.....	17
6.4. Դրամական փոխանցումներ.....	20
7. ԱՄՓՈՓՈՒՄ	21

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականին տնտեսական ակտիվության աճի տեմպը եղել է բավական բարձր: 2022-ի բարձր՝ 12.6% տնտեսական աճից հետո սպասվում էր աճի որոշակի դանդաղում, ինչը և տեղի է ունեցել տարվա ընթացքում՝ հիմնականում հունիսից սկսած, երբ տնտեսական ակտիվության տեմպը հունվար-մայիսի միջինում 12.5%-ից նվազել է՝ հասնելով միջինում 7.0%-ի (հունիս-հոկտեմբերին): Սակայն նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տնտեսությունում նոր երևույթների՝ հիմնականում ոսկերչական գործունեության ծավալների էական աճի արդյունքում տնտեսական ակտիվության աճի տեմպը կրկին արագացել է՝ լինելով միջինում 10.4%: Արդյունքում, 2023թ. տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 9.4%, որը թեև ցածր է նախորդ տարվա համեմատ, սակայն << տնտեսության համար բավական բարձր ցուցանիշ է: Այնուամենայնիվ, բարձր աճին զուգահեռ վատթարացել է տնտեսության կառուցվածքը, որի մասին առավել մանրամասն կներկայացնենք հաջորդիվ:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2023թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի աճով, որի նպաստումը կազմել է 10.0 տոկոսային կետ: Տնտեսական աճին դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար 2.4 և 0.7 տոկոսային կետով: Արդյունաբերության ոլորտի աճի վերականգնման արդյունքում մեծացել է նաև դրա նպաստումը տնտեսական ակտիվությանը՝ դառնալով 1.0 տոկոսային կետ:

Գյուղատնտեսության ոլորտում 2023թ. գրանցվել է 0.3% անկում: Թեև կառավարությունը մի շարք միջոցառումներ է իրականացնում գյուղատնտեսության


ոլորտի խթանման համար, սակայն ոլորտը շարունակում է անկում ապրել: 2023թ. անկումը հիմնականում պայմանավորված է անասնապահության անկմամբ, ինչն էլ իր հերթին հանդիսանում է սահմանամերձ գոտիներում մի շարք արոտավայրերի կորստի հետևանք:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2023թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում 2023թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին գրանցվել է աճի կտրուկ արագացում: Աճի արագացման պատճառը ոսկերչական արտադրատեսակների արտադրության բավական բարձր աճն է, ինչի պայմաններում 2023թ. նոյեմբերին արդյունաբերության աճը կազմել է 23.8%, իսկ

դեկտեմբերին՝ 20.0%: Արդյունքում արդյունաբերության աճը հունվար-դեկտեմբեր ամիսներին կազմել է 4.1%՝ հունվար-նոյեմբերի համեմատ արագանալով 2.0 տոկոսային կետով, սակայն էականորեն ցածր մնալով նախորդ տարվա աճի ցուցանիշից:


Հունվար-նոյեմբեր¹ ամիսների տվյալներով արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության 3.7% աճով, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 2.5 տոկոսային կետ: Նույն ամիսներին հանքարդյունաբերությունում անկումը շարունակվել է՝ կազմելով 5.7%՝ արդյունաբերության աճին հակազդելով 1.1 տոկոսային կետով: Մշակող արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է եղել ոսկերչական արտադրատեսակների արտադրության զգալի (շուրջ 3.9 անգամ) աճով՝ սկսած հենց նոյեմբեր ամսից, որի նպաստումը մշակող արդյունաբերության աճին կազմել է 6.3 տոկոսային կետ: Սա հիմնականում հանդիսանում է ոսկերչական իրերի ներմուծման, վերամշակման և արտահանման գործընթաց, որը բնականաբար կարող է կարճաժամկետ լինել, հետևաբար տնտեսական ակտիվության աճի արագացումը նույնպես կլինի կարճաժամկետ: Միևնույն ժամանակ, սննդի, խմիչքների, հագուստի և հիմնային մետաղների արտադրությունների ծավալները նվազել են նախորդ տարվա նույն ամիսների համեմատ:

«Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում գրանցվել է 5.7% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 0.7 տոկոսային կետով դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում՝ 5.9% աճ, որն արդյունաբերության աճին նպաստել է 0.1 տոկոսային կետով:

¹ Արդյունաբերության դեկտեմբեր ամսվա տվյալները՝ ըստ ենթաօլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ոլորտում նույնպես գրանցվել է աճի բարձր տեմպ: 2023թ. շինարարության աճը կազմել է 14.8%՝ շուրջ 2.3 տոկոսային կետով բարձր լինելով նախորդ տարվա աճից: Շինարարության աճը հիմնականում պայմանավորված է բնակարանային շինարարությամբ, ինչը բացատրվում է հիպոթեքային վարկերի համար վճարված տոկոսավճարների՝ եկամտային հարկից հետվերադարձի ծրագրի գործողությամբ:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների ոլորտի աճի տեմպը տարվա ընթացքում աստիճանաբար դանդաղել է: Ծառայությունների ոլորտում 2023թ. երկրորդ կիսամյակում նկատվել է աճի բավական ցածր մակարդակ՝ միջինում 5.4% (իսկ

տարվա վերջին երեք ամիսներին՝ 2.6%)՝ հիմնականում պայմանավորված բազայի էֆեկտով: Արդյունքում ծառայությունների աճը 2023թ. կազմել է 10.3%:

Ծառայությունների ոլորտի աճը, ըստ հունվար-նոյեմբեր ամիսների տվյալների², առավելապես պայմանավորված է եղել «տեղեկատվություն և կապ» ենթաոլորտի 40.2% աճով, որը ծառայությունների աճին նպաստել է 7.1 տոկոսային կետով: Էական նպաստում են ունեցել նաև «տրանսպորտ» և «կացություն և հանրային սնունդ» ենթաոլորտների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.5 և 1.9 տոկոսային կետ: Նույն ժամանակահատվածում «ֆինանսական և ապահովագրական գործունեության» ոլորտում գրանցվել է անկում՝ 8.1%-ի չափով՝ ինչը 2.5 տոկոսային կետով բացասական նպաստում է ունեցել ծառայությունների աճին: Վերջինս հիմնականում պայմանավորված է բազայի էֆեկտով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի աճի տեմպը տարվա ընթացքում եղել է բավական բարձր և տարեվերջին էլ ավելի է արագացել: Ի տարբերություն տնտեսության մյուս ճյուղերի՝ առևտրի ոլորտում տարվա ընթացքում գրանցվել է աճի տեմպի արագացում՝ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին հասնելով համապատասխանաբար 32.1%-ի և 35.9%-ի: Առևտրի աճի արագացումը ևս պայմանավորված է ոսկերչական արտադրանքի վերաարտահանման գործընթացի հետ: Արդյունքում առևտրի աճը 2023թ. կազմել է 25.7%՝ շուրջ 8.7 տոկոսային կետով բարձր լինելով նախորդ տարվա աճի ցուցանիշից:

² Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների, դեկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը³, %



Արտահանման ծավալները 2023թ. աճել են բավական բարձր տեմպերով, սակայն հիմնականում պայմանավորված վերաարտահանման աճով: Հունվար-դեկտեմբեր ամիսներին արտահանման աճը կազմել է 55.3%, ինչը, հաշվի առնելով նախորդ տարվա բարձր բազան, բավական տպավորիչ ցուցանիշ է: Ընդ որում, աճի տեմպի էական արագացում է նկատվել տարեվերջին (նույնպես պայմանավորված ոսկերչական արտադրանքի արտահանմամբ)⁴ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, երբ միջին ամսական աճը հասել է 111.3%-ի, այն դեպքում, երբ հուլիս-հոկտեմբեր ամիսներին արտահանման միջին ամսական աճը կազմում էր 8.9%:


2023թ. հունվար-նոյեմբեր ամիսների⁴ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի համապատասխանաբար 2.4, 1.9 և 2.4 անգամ աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր արտահանմանը կազմել են 26.0, 11.7 և 6.6 տոկոսային կետ: Վերջին երկուսի աճի տեմպերը նվազել են հունվար-հոկտեմբերի համեմատ, մինչդեռ «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման աճի տեմպն էականորեն արագացել է՝ արտացոլելով վերաարտահանման միտումների փոփոխությունը՝ տրանսպորտային միջոցներից դեպի թանկարժեք մետաղներին անցումը:

³ Արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից:

⁴ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, դեկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Արտահանման աճին բացասական նպաստում են ունեցել «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի, ինչպես նաև «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալների համապատասխանաբար 12.6%, 41.2% և 20.4% նվազումները:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը⁵, %



Ներմուծման աճի տեմպը նույնպես տարեվերջին արագացել է և հասել բավական բարձր մակարդակի: Ներմուծման ծավալների աճը 2023թ. կազմել է 40.2%, որը ևս բավական բարձր ցուցանիշ է՝ հաշվի առնելով նաև նախորդ տարվա բարձր բազայի առկայությունը: Ինչպես արտահանման պարագայում, ներմուծման դեպքում ևս տարեվերջին նկատվել է աճի տեմպի արագացում, սակայն ներմուծման դեպքում արագացումը սկսվել է հոկտեմբեր ամսից:

Ներմուծման աճը 2023թ. հունվար-նոյեմբեր ամիսներին⁶ հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերի ներմուծման աճերով, որոնք ընդհանուր ներմուծման աճին նպաստել են համապատասխանաբար 14.4, 12.2 և 9.6 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, ինչպես և արտահանման պարագայում, «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճի տեմպերը դանդաղել են, իսկ

⁵ Ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից:


⁶ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, դեկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

«թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման աճի տեմպը՝ արագացել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐԶ


Անվանական աշխատավարձի աճի տեմպը ոչ պետական հատվածում շարունակում է դանդաղել, սակայն մնում է բարձր մակարդակում: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2023 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 14.6%-ով (նախորդ ամսվա համեմատ աճի տեմպը դանդաղել է 0.9 տոկոսային կետով)՝ կազմելով 269,994.0 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 15.0%-ով (նախորդ ամսվա համեմատ աճի տեմպը դանդաղել է 1.3 տոկոսային կետով)՝ կազմելով 295,132.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձը աճել է ավելի ցածր՝ 11.4% տեմպով և կազմել է 208,323.0 դրամ (պետական հատվածում աշխատավարձի աճի տեմպը նախորդ ամսվա համեմատ արագացել է 0.7 տոկոսային կետով):

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2022-2023թթ. հունվար-դեկտեմբերին, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



2023թ. արդյունքներով ՀՀ դրամը հիմնական արժույթների նկատմամբ միջինում եղել է էականորեն արժևորված, չնայած տարվա վերջին ամիսներին փոխարժեքն արժեզրկվել է նախորդ տարվա նույն ամիսների համեմատ: 2023թ. ՀՀ դրամի միջին փոխարժեքի արժևորման չափը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 11.0%, եվրոյի նկատմամբ՝ 8.5%: Սակայն հոկտեմբերից սկսած փոխարժեքի միջին ամսական մակարդակը եղել է արժեզրկված նախորդ տարվա նույն ամիսների

համեմատ: Այսպես, ԱՄՆ դոլարի դեպքում արժեզրկման չափը միջինում (հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին) կազմել է 1.5%, իսկ եվրոյի դեպքում՝ 6.7%: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը 2023թ. նույնպես էականորեն արժևորված է եղել, որի տեմպը, սակայն, շարունակել է արագանալ մինչև տարեվերջ: Արդյունքում, հունվար-դեկտեմբերին ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման չափը կազմել է 39.2%: Բնականաբար, փոխարժեքի արժևորված մակարդակը դժվարություններ է առաջացրել արտահանողների համար՝ նվազեցնելով գնային մրցունակությունը, ինչն արտացոլվում է նաև արտահանման վիճակագրությունում՝ ՀՀ-ից որոշ ապրանքատեսակների (հիմնականում հայկական արտադրության) արտահանման ծավալների նվազման տեսքով:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ


5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը տարեվերջին արագացել է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2023թ. աճել են բավական բարձր տեմպով՝ 14.3%-ով՝ հիմնականում պայմանավորված լինելով հարկային եկամուտների շուրջ 15.4% աճով: 2023թ. դեկտեմբերին հարկային եկամուտների աճի տեմպն էականորեն արագացել է՝ կազմելով 25.2%, ինչի արդյունքում տարվա ընդհանուր հարկերի և տուրքերի ծավալը կազմել է 2,221.9 մլրդ դրամ: Վերջինս ընդամենը 2.9 մլրդ դրամով է ցածր տարվա համար բյուջեի ճշտված պլանով նախատեսված ցուցանիշից, իսկ տարվա համար բյուջեով նախատեսված պլանային ցուցանիշից բարձր է 18.2 մլրդ դրամով⁷:

Բյուջեի ոչ հարկային եկամուտները 2023թ. աճել են 1.3%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները նվազել են 12.7%՝ արտացոլելով արտաքին ֆինանսավորմամբ ծախսերի իրականացման թերացումները, ինչի հետևանքով նախատեսված դրամաշնորհների որոշ մասը չի ստացվել:

⁷ Պետական բյուջեի կատարողականի վերաբերյալ տեղեկատվությունը նախնական է: Ներկայացված է 2023թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ճշտված պլանի հետ համեմատությունը, քանի որ տարվա վերջի դրությամբ ճշտված պլանը դեռևս հասանելի չէ: Վերջինս կիրառարակվի 2023թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվության հրապարակման հետ:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը⁸, %



Հարկային եկամուտների աճը 2023թ. առավելապես պայմանավորված է հիմնական խոշոր հարկատեսակների՝ շահութահարկի (աճը՝ 44.3%), ԱԱՀ-ի (աճը՝ 12.9%) և եկամտային հարկի (աճը՝ 16.8%) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 5.1, 4.5 և 4.1 տոկոսային կետ: Հարկային եկամուտների աճին բացասական նպաստում են ունեցել պետական տուրքերի 36.9% և բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների 36.8% նվազումները, որոնք հարկերի աճին հակազդել են համապատասխանաբար 2.0 և 1.8 տոկոսային կետով: Պետական տուրքերի նվազումը պայմանավորված է եղել մետաղական հանքանյութերի արտահանման տուրքի չեղարկմամբ (2022թ. սեպտեմբերից), իսկ բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների նվազումը՝ պղնձի միջազգային գների նվազմամբ:


⁸ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2022թ. հունվար-դեկտեմբեր		2023թ. հունվար-դեկտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	21.4	21.4	15.4	15.4
Ավելացված արժեքի հարկ	22.2	7.8	12.9	4.5
Ակցիզային հարկ	12.7	0.9	17.2	1.1
Շահութահարկ	40.5	4.0	44.3	5.1
Պետական տուրք	59.7	2.5	-36.9	-2.0
Մաքսատուրք	-33.2	-1.8	32.8	1.0
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	53.0	2.1	-36.8	-1.8
Այլ հարկեր	20.1	0.6	47.1	1.4
Շրջանառության հարկ	25.7	0.5	28.1	0.6
Եկամտային հարկ	11.4	3.1	16.8	4.1
Սոցիալական վճարումներ	50.0	1.4	40.1	1.3

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը նույնպես արագացել է: Ընդհանուր ծախսերի աճը 2023թ. կազմել է 13.6%, իսկ ծախսերի մակարդակը հասել է 2,547.6 մլրդ դրամի: Ծախսերը ևս թերակատարվել են, սակայն առավել

մեծ չափով՝ շուրջ 43.3 մլրդ դրամով՝ բյուջեով նախատեսված պլանի համեմատ և շուրջ 45.0 մլրդ դրամով՝ ճշտված պլանի համեմատ⁹: Ծախսերի կազմում ընթացիկ ծախսերը աճել են 11.4%-ով՝ կազմելով 2,075.0 մլրդ դրամ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների (որոնք հիմնականում կապիտալ ծախսերն են) գծով ծախսերն աճել են 24.2%-ով՝ կազմելով 472.6 մլրդ դրամ: Մինչև ժամանակ, ընթացիկ ծախսերի գծով գրանցվել է գերակատարում՝ ճշտված պլանի համեմատ շուրջ 26.3 մլրդ դրամի չափով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների մասով, ինչպես և սպասելի էր, գրանցվել է թերակատարում՝ շուրջ 71.3 մլրդ դրամի կամ 13.1%-ի չափով: Հատկանշական է, որ կապիտալ ծախսերի աճի էական արագացումը տեղի է ունեցել դեկտեմբերին, երբ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն աճել են 75.7%-ով (միայն դեկտեմբերին կապիտալ ծախսերի ծավալը կազմել է 153.7 մլրդ դրամ), ենթադրվում է, որ դրա զգալի մասը պայմանավորված է պաշտպանական ծախսերի իրականացմամբ:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



⁹ Պետական բյուջեի կատարողականի վերաբերյալ տեղեկատվությունը նախնական է: Ներկայացված է 2023թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ճշտված պլանի հետ համեմատությունը, քանի որ տարվա վերջի դրությամբ ճշտված պլանը դեռևս հասանելի չէ: Վերջինս կիրառարակվի 2023թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվության հրապարակման հետ:

Պետական բյուջեի պակասուրդը դեկտեմբերին կտրուկ աճել է, սակայն մնացել է նախատեսվածից փոքր: ՀՀ պետական բյուջեի պակասուրդը դեկտեմբերին կազմել է 126.1 մլրդ դրամ, իսկ հունվար-դեկտեմբեր ամիսներին՝ 188.9 մլրդ դրամ՝ ճշտված պլանով նախատեսված 267.4 մլրդ դրամի փոխարեն: Վերջինս գրեթե ամբողջությամբ պայմանավորված է կապիտալ ծախսերի թերակատարմամբ:


5.4. Պետական պարտք

Կառավարության պարտքը 2023թ. շարունակել է աճել: 2023թ. դեկտեմբերին ՀՀ պետական պարտքի՝ ԱՄՆ դոլարով արտահայտված ծավալի աճը կազմել է 11.4%՝ նոյեմբերի համեմատ արագանալով 2.2 տոկոսային կետով: Դրամային արտահայտությամբ ՀՀ պետական պարտքն աճել է 14.5%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 3.3 տոկոսային կետով: Կառավարության պարտքը նման միտումներ է ունեցել՝ դոլարային արտահայտությամբ աճելով 12.0%-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 15.2%-ով: Ներքին պարտքի աճի տեմպն էականորեն ավելի բարձր է եղել. դրամով արտահայտված ներքին պարտքի ծավալն աճել է 31.1%-ով, իսկ դոլարով արտահայտված արտաքին պարտքի ծավալն աճել է 1.0%-ով: Ներքին պարտքի կշիռը ընդհանուր պարտքի պորտֆելում մեծացել է՝ դեկտեմբերի վերջի դրությամբ հասնելով 47.3%-ի:

Եթե 2024թ. բյուջեի հիմքում դրված կանխատեսումները 2023թ. անվանական ՀՆԱ-ի վերաբերյալ իրականություն դառնան, ապա կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի 48.4%՝ աճելով 1.7 տոկոսային կետով:

2023թ. դեկտեմբերին պետական միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքները որոշակիորեն աճել են, սակայն նախորդ տարվա համեմատ ավելի ցածր են եղել: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2023թ. դեկտեմբերին կազմել է 10.6%՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 0.1 տոկոսային կետով, որը, սակայն, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ ցածր է 1.0 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նոյեմբերի համեմատ մնացել է նույն մակարդակում, սակայն նույնպես նվազել է նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ շուրջ 1.1 տոկոսային կետով: Տոկոսադրույքների վերջին ամիսների աճը կարող է պայմանավորված լինել ինչպես բանկային համակարգում իրացվելիության նվազմամբ (պայմանավորված վարկավորման ծավալների աճով և ավանդների աճի դանդաղմամբ), ինչպես նաև կառավարության կողմից էապես մեծ ծավալներով տեղաբաշխումների իրականացմամբ:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %




2023 թվականին գնաճի տեմպն էականորեն դանդաղել է: Նախորդ տարվա մարտ ամսից սկսած գնաճի տեմպն սկսել է զգալիորեն դանդաղել, իսկ հունիսից գրանցվել է գնանկում, որը որոշակի տատանումներով պահպանվել է մինչև տարեվերջ: Գնաճի դանդաղումը հիմնականում պայմանավորված է եղել ներմուծվող ապրանքների գնաճի դանդաղմամբ և որոշ ներմուծվող ապրանքների գների նվազմամբ (ինչպես միջազգային շուկաներում գների նվազման, այնպես էլ փոխարժեքի արժևորման արդյունքում դրամային գների նվազման հետևանքով),

ինչպես նաև ԿԲ կողմից վարվող խիստ դրամավարկային քաղաքականությամբ: Արդյունքում 2023թ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ գրանցվել է -0.6% գնաճ, իսկ տարվա ընթացքում միջին գնաճը կազմել է 2.0%:

Կենտրոնական բանկը տարվա ընթացքում, արձագանքելով գնաճային միջավայրի փոփոխություններին, աստիճանաբար նվազեցրել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը (ընդհանուր առմամբ 1.5 տոկոսային կետով)՝ հասցնելով այն 9.25%-ի, իսկ 2024թ. հունվարի վերջին, շարունակելով քաղաքականության մեղմացումը, տոկոսադրույքը նվազեցրել է ևս 0.5 տոկոսային կետով:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպը 2023 թվականի ընթացքում ունեցել է հիմնականում դանդաղման միտում՝ պայմանավորված ինչպես բազայի էֆեկտով, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների որոշակի նվազմամբ: Ընդհանուր ավանդների աճի տեմպը տարեսկզբին եղել է բավական բարձր՝ հունվար-ապրիլին կազմելով միջինում 27.5%, սակայն աստիճանաբար դանդաղելով՝ դեկտեմբերին հասել է 10.8%-ի՝ էականորեն զիջելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշին: Աճը պայմանավորված է եղել ռեզիդենտների ավանդների 17.0% աճով, մինչդեռ ոչ ռեզիդենտների ավանդները նվազել են 5.0%-ով:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին 2023 թվականին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 9.5 տոկոսային կետով: Ռեզիդենտների ավանդների շարքում էական նպաստում է ունեցել նաև ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճը, որի նպաստումը կազմել է շուրջ 2.0 տոկոսային կետ: Ոչ ռեզիդենտների ավանդների նվազումն ընդհանուր ավանդների աճին հակազդել է 1.4 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


Վարկերի ծավալն աճել է բավական բարձր տեմպով: 2023թ. դեկտեմբերին ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 22.4%-ով: Ընդ որում, վարկերի աճի տեմպը տարվա ընթացքում ունեցել է արագացման միտում:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերը՝ ըստ վարկառուների ռեզիդենտության, %



Վարկերի աճը տեղի է ունեցել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճի հաշվին, որոնց աճերը կազմել են համապատասխանաբար 21.9% և 31.9%, իսկ նպաստումները՝ 20.8 և 1.6 տոկոսային կետ:


Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 12.2 և 9.6 տոկոսային կետ: Ընդ որում, հատկանշական է, որ իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի ծավալների աճի տեմպը տարեսկզբին բացասական էր, սակայն ապրիլից մտել է դրական տիրույթ,

էականորեն արագացել է և տարեվերջին գերազանցել է տնային տնտեսություններին տրամադրվող վարկերի աճին՝ հասնելով 24.7%-ի:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ




Ռեզիդենտների¹⁰ շարքում բոլոր ուղղություններով առկա է դրական դինամիկա, բացի արդյունաբերության ոլորտից: Վարկերի աճին շարունակում են էական մեծ նպաստում ունենալ հիպոթեքային վարկերը, որոնց աճը կազմել է 26.4%, իսկ նպաստման չափը՝ 5.4 տոկոսային կետ: Նախորդ տարվա համեմատ վարկերի աճի տեմպի արագացումը հիմնականում պայմանավորված է հիպոթեքայինից բացի այլ ոլորտներին ուղղվող վարկերի աճերի արագացմամբ: Առավել նշանակալի են առևտրի ոլորտի, սպառողական և շինարարության ոլորտների վարկերի աճերի արագացումը, ինչի արդյունքում դրանց նպաստումներն ընդհանուր վարկերի աճին կազմել են համապատասխանաբար 2.5, 4.6 և 3.6 տոկոսային կետ: Վարկերի աճին էական (շուրջ 3.3 տոկոսային կետով) նպաստում է ունեցել նաև ծառայությունների ոլորտին տրամադրված վարկերի աճը: Արդյունաբերությանն ուղղվող վարկերի ծավալները ինչպես 2022-ին, այնպես էլ 2023-ին նվազել են, ինչից կարելի է ենթադրել, որ ոլորտում առկա է ցածր ներդրումային ակտիվություն:

¹⁰ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար¹¹



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը 2023թ. հունվար-նոյեմբերին նախորդ տարվա համեմատ եղել է ցածր մակարդակում: 2023թ. նոյեմբերին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է ընդամենը 39.6 մլն ԱՄՆ դոլար, որն էականորեն ավելի ցածր է՝ նախորդ տարվա նոյեմբերի 225.3 մլն ԱՄՆ դոլարից: Հունվար-նոյեմբեր ամիսների ընդհանուր զուտ ներհոսքը նույնպես զգալիորեն նվազել է՝ շուրջ 34.5%-ով: Հատկանշական է, որ զուտ ներհոսքի նվազումը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից արտահոսքի աճով, որի ծավալը 2023թ. հունվար-նոյեմբերին կազմել է 3.7 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2022թ. նույն ժամանակահատվածի 2.3 մլրդ-ի համեմատ: Մինչդեռ ներհոսքը նույն ժամանակահատվածում աճել է՝ կազմելով 5.2 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 4.6-ի դիմաց:

¹¹ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:
Դեկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2023 թվականն ավարտվել է տնտեսական ակտիվության բավական բարձր տեմպով, սակայն տնտեսության կառուցվածքը վատթարացել է: Տնտեսական ակտիվության ցուցանիշը տարվա վերջին երկու ամիսներին կտրուկ արագացել է՝ պայմանավորված ոսկերչական գործունեության աճով, ինչի արդյունքում 2023թ. տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 9.4%: Մինչույն ժամանակ, ինչպես 2022 թվականին, 2023-ին ևս, տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել ժամանակավոր և աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված գործոններով, որոնք կարող են չեզոքանալ՝ թողնելով տնտեսությունն առանց աճի «լոկոմոտիվների»: Այս պայմաններում, թեև աճում է արտահանումը, սակայն զարգանում են տնտեսության ոչ արտահանելի հատվածները, մասնավորապես՝ առևտուրը, որը բավական տատանողական է և զգայուն շուկերի նկատմամբ: Ավելին, 2023թ. բարձր աճին զուգահեռ անկում է գրանցվել տնտեսական ավանդական մի շարք ճյուղերի թողարկումներում (սննդի, խմիչքների, հագուստի արտադրություն), հետևաբար նաև այդ ճյուղերի արտադրանքի արտահանման ծավալներում, ինչն արտացոլում է արտահանելի հատվածում առկա էական խնդիրները:

2. Արդյունաբերության ոլորտի 2023թ. զարգացումները բավական մտահոգիչ են: 2023թ. արդյունաբերության ոլորտում գրանցվել է բավական ցածր աճ՝ չնայած այն հանգամանքին, որ տարեվերջին աճի տեմպը սկսել է կտրուկ արագանալ: Մտահոգիչ է այն, որ անկման միտումներ են գրանցվել մշակող արդյունաբերության ավանդական կարևոր ճյուղերում (սննդի, խմիչքների, հագուստի արտադրություն), մինչդեռ ընդհանուր արդյունաբերության աճի տեմպի արագացումը պայմանավորված է ոսկերչական գործունեության աճով, որը հանդիսանում է վերաարտահանման գործընթացի բաղկացուցիչ և հնարավոր է ունենա կարճաժամկետ բնույթ: Այս առումով, ինչպես նշվեց վերևում, նկատվում է տնտեսության կառուցվածքի վատթարացում, որն արտահայտվում է նաև արդյունաբերության ոլորտի կառուցվածքի վատթարացմամբ, քանի որ մեծանում են առավել անկայուն ոլորտների կշիռները, ինչը միջնաժամկետում կարող է մեծացնել ՀՀ տնտեսության խոցելիությունն արտաքին իրավիճակի փոփոխությունների հանդեպ: Ավելին, չնայած առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի էական աճին, արդյունաբերության ոլորտի վարկերի ծավալը նվազել է, ինչը խոսում է ոլորտի ներդրումային ակտիվության նվազման, հետևաբար նաև հետագա տարիների աճի ցածր տեմպերի սպասման մասին:

3. Արտահանման կառուցվածքը նույնպես վատթարացել է: Արդյունաբերության ոլորտի զարգացումները արտացոլվում են նաև արտահանման կառուցվածքում, ինչը ևս անհանգստության տեղիք է տալիս: Թեև արտահանման

ծավալները 2023թ. էական աճ են գրանցել, դա հիմնականում պայմանավորված է եղել ոչ հայկական արտադրանքի արտահանմամբ, այսինքն՝ վերաարտահանմամբ: Մինչույն ժամանակ, ինչպես և սպասելի էր (դեռևս 2022թ. սկզբին տնտեսագետներն արդեն իսկ մտահոգություններ էին հայտնում ռուսկրահինական պատերազմի հետևանքով ստեղծված նոր հնարավորությունների՝ ՀՀ տնտեսության վրա բացասական ազդեցությունների հեռանկարի մասին), հայկական արտադրության մի շարք ապրանքատեսակների գծով («կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք», «բուսական ծագման արտադրանք», «պատրաստի սննդի արտադրանք») նկատվում է արտահանման ծավալների նվազում: Այսինքն՝ արտահանման աճը պայմանավորված է եղել անկայուն և արտաքին իրավիճակով պայմանավորված գործոններով, մինչդեռ ՀՀ արտադրվող ապրանքների արտահանումը կրճատվել է: Այս պարագայում, արտաքին իրավիճակի փոփոխության դեպքում, արտահանման աճն ապահովող գործոնները կչեզոքանան, և ՀՀ արտահանումն այլևս նույն ծավալներով չի լինի՝ հանգեցնելով արտահանման զգալի կրճատման: Սա նույնպես խոսում է տնտեսության ներուժի թուլացման մասին:

4. Գյուղատնտեսության ոլորտն «ավանդաբար» շարունակում է անկում ապրել: 2023թ. գրանցվել է 0.3% անկում: Թեև կառավարությունը մի շարք միջոցառումներ է իրականացնում գյուղատնտեսության ոլորտի խթանման համար, սակայն ոլորտը շարունակում է անկում ապրել: 2023թ. անկումը հիմնականում պայմանավորված է անասնապահության անկմամբ, ինչն էլ իր հերթին հանդիսանում է սահմանամերձ գոտիներում մի շարք արոտավայրերի կորստի հետևանք: Սա ևս մեկ գործոն է, որը նվազեցնում է տնտեսության ներուժը (քանի որ նվազում են արտադրանքի թողարկման հնարավորությունները), սակայն սա ունի նաև սոցիալական հետևանքներ, քանի որ ուղղակիորեն ազդում է գյուղական բնակավայրերում ապրող բնակչության կենսամակարդակի վրա:

5. Պետական բյուջեն 2023 թվականին էականորեն չեղվել է պլանավորվածից: 2023թ. պետական բյուջեի ծախսերը թերակատարվել են, սակայն միայն կապիտալ ծախսերի մասով: Ընթացիկ ծախսերը իրականացվել են բյուջեով նախատեսվածից ավելի մեծ ծավալներով (կատարողականի վերջնական տվյալները հասանելի կլինեն 2023թ. պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում): Կապիտալ ծախսերը՝ թերակատարվելով հանդերձ, նախորդ տարվա համեմատ աճել են, ինչը կարող է նպաստել տնտեսական աճի արագացմանը: Սակայն անհրաժեշտ է իրականացնել դրանց առավել մանրամասն ուսումնասիրություն՝ տնտեսությանն ուղղվող և պաշտպանության ոլորտին ուղղվող ծախսերը տարանջատելու համար, որպեսզի հնարավոր լինի գնահատել դրանց աճի տնտեսական ազդեցությունները:

6. 2023 թվականն աչքի է ընկնում նաև արտերկրից փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքի էական ցածր մակարդակներով: Ընդ որում, զուտ ներհոսքի նվազումը պայմանավորված է ոչ թե ներհոսքի կրճատմամբ, այլ արտահոսքի մեծացմամբ: Այսինքն՝ ՀՀ-ից արտերկիր, հիմնականում՝ Արաբական Միացյալ Էմիրություններ, արտարժույթի արտահոսքը մեծացել է: Հունվար-նոյեմբեր ամիսներին դեպի ՀՀ փոխանցված ընդհանուր արտարժույթի զուտ ներհոսքը զգալիորեն նվազել է՝ շուրջ 34.5%-ով: Հատկանշական է, որ զուտ ներհոսքի նվազումը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից արտահոսքի աճով, որի ծավալը 2023թ. հունվար-նոյեմբերին կազմել է 3.7 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2022թ. նույն ժամանակահատվածի 2.3 մլրդ-ի համեմատ: Մինչդեռ ներհոսքը նույն ժամանակահատվածում աճել է՝ կազմելով 5.2 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 4.6-ի դիմաց:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: